

Եթէ այս վերջին ու նուազագոյն պահանջ անկեղծութիւնն էլ պահպանուի է, ապա խոստովանենք, որ բարոյական կազմալուծումն է բուն գրել մէջներս ու ի գուր ենք վերահաս անխուսափելի վտանգի առաջ հոգեւարքի կանչուածները բարձրացնում: Եթէ օտարին շացնելու համար է, նա մեզնից գործ կպահանջէ ու մեր խօսքին չի հաւատայ, եթէ մեզ համար է. աւելորդ ինքնախարէութիւն է:

Տարին բոլորում է, իսկ մեր հասարակական ցաւերը բազմապատկոււմ են ու խորանում մինչդեռ ճրքան շատ են թղթի սրտացաւ գործիչները, գրչի գաղափարախօսները, հրապարակի վրայ օձիք պատող հայրենասէրները:

Աղէտը խօսքով չի բուժոււմ, աղէտը այժմ և եթ յանցաւորը գտնելու միջոցով չի դարմանոււմ: Աղէտը գործող է պահանջում, անդադրում, անվերջ աշխատող. մինչև ճգնաժամն անցնի, մինչև փորձութիւնը վերջանայ:

Չկրկնենք մեր անցեալ սխալը, չընդարձակենք մեր աղէտը մեր անժամանակ հաշուէյարդարով, մեր անտեղի քննադատութիւններով:

Աշխատենք անվերջ, անկեղծ ու հաւատացէք որ մեր աղէտը կվերջանայ և յանցանքը կմեղմանայ:

Թողնենք խօսքի, անպէտք խօսքի տարին ու աշխատանքի տարին թևակոխենք:

Գիւտ արեղայ

**Մ Ա Մ Ո Ւ Լ .**

«Հովիտ» շաբաթաթերթը իր №№ 40 եւ 41-ում իմ «Անձանօթութեան հետեւանքը» յօդուածից ուշադրութեան է արժանացրել «Անձանօթութեան հետեւանք չէ» խմբագրականով ու առաջարկել է «Բարի խրատներ» չը կարդալ որովհետև «մի արեղայ» եւ: հաւանօրէն «Բարի խրատ» վարդապետի աստիճան ունեցողին է վերապահուած...

Բայց ոչ միայն «Բարի խրատ» տալու իրաւունքից է զրկում, այլ որ զխաւորն է իմ գրածը ծայրէ ի ծայր սխալուած, որովհետեւ մեր կործանման պատճառը ոչ թէ «անձանօթութեան հետեւանք է» այլ «այլասեռման»։ Բայց որքան հեշտութեամբ արեղայիս անգամ «բարի խրատ» տալու այնքան հանրամատչելի իրաւունքից է զրկում յօղուածագիրը, նոյնքան յաւակնութեամբ իրեն գիտական հիմքերով հասարակական երեւոյթները քացատրելու կարողութիւններն է վերագրում։

Եթէ մի քիչ զբաղուէր յօղուածագիրը իր գրածով կտեսնէր, որ այլասեռումը անձանօթութեան մի մասն է. ուրիշ խօսքով նա երեւոյթի մի պատճառը ուշադրութեան է առնում, իսկ այդ եւ դրա նման այլ պատճառներ ընդգրկող համայնապարփակ պատճառը ժխտում է։

Արեղան յանդգնում է ասելու, որ հասարակագիտական տեսակէտից յօղուածագիրն ինքն իրեն հերքում է եւ ի դժբախտութիւն իւր, արեղայի ասածը հաստատում. այստեղ արդէն բարի խրատ տալու՝ արեղայի ու վարդապետի կրօնական աստիճանաւորութեան հետ կապուած իրաւունքի հարց է, այլ սոսկ գիտական, որին ի դժբախտութիւն գրողի ամեն աստիճանի տէր մօտենալ կարող է։

Ճեմարան աւարտելը «հայի անցեալին, պատմական հիմնարկութիւններին, մեր եկեղեցուն» ծանօթ լինելու ապացոյց համարելը գրողի իրեն հայ կեանքին անձանօթ լինելն է ցոյց տալիս։ Հայ կեանքը շատ է հարուստ ու բազմազան, որ կարելի լինի ոչ միայն ճեմարան, այլ եւ համալսարանի հայագիտական մասն աւարտելուց, անգամ տարիներ զբաղուելուց յետոյ ծանօթ լինել։

Արեղան ոչ իբրեւ բարի խրատ, այլ գիտական տեսակէտից է ասում, միայն իբրեւ մի վերջին օրինակ, որ հայ ճարտարապետութիւնը, մանրանկարչութիւնը, երաժշտութիւնը վերջին տասնամեակում է իր իւրայատուկ արժէքով երեւան գալիս եւ դեռ ինչքան, ինչքան մասեր մնում են փոշու, աւերի տակ ծածկուած, ու ինձ էլ, գիտնականին էլ, քանստէրին էլ անձանօթ։

Յօղուածագիրը շատ խեղճ է համարում հայ եկեղեցուն, երբ «Հին Աստուածները» եկեղու հիմքին խիստ քար է համարում: Ներուի ինձ ասել, որ այդ արտայայտութիւնից մի տեսակ կաթ ուղիկ եկեղեցու Index-ի հոտ է փչում: Գրական այդ շնորհալի գեղարուեստական երկը այդպիսի քննադատութեան ենթարկելու դէպքում անգամ, որին միանգամայն դէմ եմ: գրողը մոռացել է լուրջ մօտենալուց. այլապէս նա կ'իշէր Վանահօր իդէալիսա տիպը, որը իւր հոգու թափով ու գործով մնացեալ փանականներին գերակշռում է եւ սրը հայ եկեղեցու, վանքի կրօնաւոր է:

Որ հայ եկեղեցում եղել են կան ու կլինեն հայ կեանքին անձանօթ հոգեւորականներ, անգամ պանակէ կրելու իրաւունքով օժտուած, այդ հայ եկեղեցու պատմութիւնն է արձանագրել փաստերով. թող յիշէ հէնց մեր ԺԹ-րդ դարու առաջին շրջանի եկեղեցականութեան. շեմ կասկածում, որ գրողը ինքն էլ գիտէ յականէ յանուանէ մեր եկեղեցուն անձանօթ հոգեւորականների. թող Տփխիսում լաւ դիտէ... Եւ ո՞ր երկրի եկեղեցականների ու աշխարհականների մէջ չկան անձանօթներ իրենց ազգային ու եկեղեցական պատմութեան:

Թող լաւ կարոյայ հէնց նոյեմբեր ամսի Տփխիսի օրութերթերը եւ յօղուածագիրը կտեսնէ, որ այստեղ էլ մեր կեանքի անձանօթութեան մասին են խօսում անգամ տարիներ հայ գիրք ու յօղուած գրողները:

Կրկնում եմ թերթի քերած փաստերը կամ այն է, որ հասարակական երեւոյթի քացատրութեան փաստեր չեն կամ հէնց մեր կեանքին անձանօթ լինելն են սպացուցուած:

Յիրաւի եթէ մեր կեանքը ճեմարան աւարտելով, մի դրամա գրելով, մի ժողովում ի գուր յոխորտանքներ անելով սահմանափակուէր, գուցէ եւ սխալուած լինէի իմ յօղուածով:

Բայց հայ կեանքը շատ է խոր ու շատ մեծ անցեալ ունեցող, որ կարելի լինի այդքան հեշտութեամբ ծանօթանալ:

Յօղուածագիրը լաւ կանէ նախ ինքը հայ կեանքի հետ ծանօթանայ, որ շարսափի թէ մի դրամայից, մի երկու

ծնմարանականների ու եկեղեցականների սխալներից հայ եկեղեցին քարուքանդ կլինի, նոր ապա հայ կեանքի «կործանման» մասին խօսի:

Որքան եւ մամուլը պահանջկոտ չէ գրողների նկատմամբ, քայց գրողն իր պատուի համար թոյլ չպիտի տայ հասարակական երեւոյթի պատճառները քննելիս անձնական տպաւորութիւնները պտտմառ համարելու:

Հայ կեանքի կործանման պատճառներից մէկն էլ արդեօք գիտական այդ պահանջին անձանօթ լինելը չէ. Արժէլաւ մտածել նաեւ այս մասին:

Հասարակական ինդրի քննութիւնը անձնական հաշիւ մաքրելու, այսպէս ասած «սիրտը հովացնելու» օրուայ էժան ծափի հերոս դառնալու անպտուղ աշխատանքում վարժուած «Հորիզոն»-ի № 265-ի մամուլ կազմողը «Արարատ»-ի № 9—10-ի «Սրտացաւ աշակցութեան կարիքը» յօդուածի վրայ մարզանք է կատարել ու անշուշտ առնուազն ինքն ու խրմբազրութիւնը գոհ են մնացել:

Երբ խնդիրը էջմիածնին է վերաբերում եւ քառարանից քառեր ընտրելու եւ իրար կողքի շարայարելու կատարեալ ազատութիւն է տիրում մամուլի որոշ տեսակի աշխատատեղերի համար: Արդեօք այդ ազատութիւնը էլ չեմ ասում էջմիածնի, այլ հէնց իրենց այդ աննախանձելի ազատութիւնից օգտուողների համար օգտակար է, թէ ոչ:

Երբ ազատութիւն կայ գրելու, անհասկանալի չեմ համարում, որ մեզանում այդ ազատութիւնը ամենից առաջ ի շարք գործադրուի: Այդպէս է եղել աշխարհի կարգը այն հասարակութիւնների համար որոնք դեռ ազատութիւնը չգիտակցած ազատ են զգացել:

Այս ասում է «Երբ ընծայ խմբագիրը» որպիսի տիտղոսը «Հորիզոն»-ի յօդուածագրին դուր չի եկել. որովհետեւ նա ճշմարտութիւն, խելօք խօսք սովոր է լսել հեղինակաւոր «անուն հանած» գրողից եւ ոչ «նոր ընծայ արեղայից»:

Երբ մի անգամ տիտղոսը հեղինակութեան երաշխիք չի տալիս, ընական է, որ եւ «կոկորդիլոսեան արցունքներ» եւ «աքսուրտ» եւ «ղերերի փոխումն» եւ այլն ածականներն իրենք իրենց առաջ գան այդ խմբագրի հասցէին: Եւ զուցէ դեռ գոհ պիտի մնալ, որ գրողը խնայել է, նա իրաւունք ունէր ասելու աւելին եւ ո՞վ է քողոքողը. խնդիրը էջմիածնին է վերաբերում, ուրեմն մեղաւոր է նրա օգտին խօսողը. մանաւանդ երբ արեղայ է:

«Հայութեան մտաւոր կենդրոնում» Տփլիսում նստող գրողը իրեն իրաւունքն է համարում յայտարարելու որ «խկ մեր ս. հայրերը չնչին, ամենասովորական քաներն անգամ «անհրազործելի» են համարում, որովհետեւ իրենց սամմա-նափակ շրջանից դուրս քան չեն տեսնում»:

Չասեմ, թէ հէնց այդ երկրի ու երկնքի խորքը քննելու մենաշնորհը իրեն վերագրելու «առաքինութիւնից» է, որ մեր կեանքի խոշոր հարցերն անգամ հեշտ լուծելու եւ վերջը «հորը մի քար գլորելու» դրովթիւնն է ստեղծում: Չասեմ, որ էջմիածնի «սամմանափակ շրջան»-ում ապրողներից շատ շատերին «մտաւորականութեան կենդրոնում» անսահման հայեացքներ ունեցողները խորհրդի են նստել եւ խրատ ստանալով հեռացել: Հէնց այդ ան-սահման հայեացք ունենալու հետեւանք չէ՞ եւ այն հարցը, «թէ ի՞նչպէս է, որ հապա այդպիսիներից (ծիպական դպրոցի ցենզ ունեցողներից) ոմանք այնուամենայնիւ գերադասում են էջմիածնական միաբանի «նիւթական սղութիւնը, զրկանքը» եւ ծխական դպրոցի ասպարէզը թողնելով կուսակրօնի սքեմն են հազնում, երբեմն մէկից աւելի անգամ»:

Անճապակ կեանքի վերլուծութեան խնդիր հանելն ըստ ինքեան նեղ տեղն ընկած մարդու զէնք է եւ պիտի ասեմ, որ ի դժբախտութիւն գրողի այս անգամ եթէ հրապարակ քերէր հարցը յօգուտ իրեն չէր խօսի. թողնեմ այդ, քանի հասարակական խնդիրը անճապակի հետ կապելու դժբախտ սովորութեամբ մարգրուած են նման գրողները, եւ ընակա-նարար հէնց այդ յանցանքն է վերագրում Մայր Աթոռի հայրերին, որոնք «սիրում են իրենց անձը նոյնացնել հաս-

տատութեան հետ»: Ճշմարիտ որ ում ինչ տեղը որ ցաւում է, նա նրա մասին էլ խօսում է:

Ինչո՞ւ հերոսների պաշտամունք յօղուածներով կաղողէ «Հորիզոն»-ի էջերը եւ կհաւատան մարդիկ ժողովրդի համար զգացմունք են ունեցել: Իսկ Էջմիածնի միաբանութեան «նիւթական սղութեանը» համաձայնելու եւ նոյն ժողովրդին ծառայելու «չնչին» զգացմունքն ունենալու չեն հաւատայ «Աշխարհի փոխուելը, դարաւոր անսասան հացկացողութիւնների ու ինստիտուտների հիմնովին տատանուելը» տեսնողները եւ ըմբռնողները:

Ոչ ոք ոչինչ չունի ձեզ ամեն առաքինութիւն վերագրելուն համար. քայց ինչո՞ւ չենթադրել թէ ուրիշն էլ գոնէ «չնչին» պարտքի զգացում կարող է ունենալ եւ գործի կենալ իր ոյժերի չափ:

Այդքան առաքինութիւն ունեցող ու աշխարհի փոփոխութիւններն ըմբռնողն ի՞նչպէս է անգիտանում, որ երբ հնաոք չկայ Էջմիածնի միաբանին 60 ուրլուց աւելի տալու, ապա «մասնագէտ գիւղատնտեսներ, բունկտի գործիչներ, տնտեսական կառավարիչներ» հրաւիրելու համար մի քանի անգամ 50 — 60 ուրլի ամսական պէտք կլինի. եւ այդ դեռ քիչ է. գիւղատնտեսը, բունկտի գործիչը գործ անելու համար էլ դրամագլուխ պիտի ունենայ:

Թէ՛ այս էլ սահմանափակ շրջանի նստողի խօսք լինելով սխալ է. արտուրդ է: Այն ժամանակ թող ոռոս ու օտարազգի անտեսագէտներին կարդացէք, թէ ասագին կալուածների շահագործման համար դրամագլուխ պէ՛տք է, թէ ոչ եւ արդեօք ո՞ր ձևի շահագործման պիտի հետեւէ որոշ դէպքում՝ կապալի, ինքնուրոյն, կիսավի եւ այլն: Սրանք հարցեր են, որ «սահմանափակ շրջանում նստողները» քննութեան են առնում, իսկ «Հորիզոն»-ի աշխարհի փոխուելը տեսնողը ուզում է եւ լուծում է:

Դրած հարցը շատ է ծանր, որ ուզենալով լուծուի, կրկնում ենք, նայեցէք ուսումնասիրեցէք խնդիրը եւ մի քաւականանաք ուզենալով, երբ կունենաք փաստը դատապարտեցէք:

Դերի փոխելու մասին խօսք հանողը այժմ՝ առնուազն «Հորիզոն»-ի ամենագէտ զրոյր չպիտի հանէր, որովհետեւ այստեղ է, որ յիրաւի «դարաւոր անսասան հասկացողութիւններ» փոխուել են հէնց «հայ մտաւորականութեան կենդրոնում» եթէ մի քիչ իւր սահմանափակ զրասնեակից դուրս նայի զրոյր:

«Ազգային Բիւրօն» ու իր պատմութիւնը օրինակ. Յիշում եմ ու անցնում: Իւրեւանցիները եւ Հ. Առաքելեանի դատը ուր այնքան սրտառուչ տեսարաններ եղան ու առաքինութիւններ երեւան եկան. այդ էլ Էջմիածին էր. այդ էլ «ծխական դպրոցի ասպարէզը թողնող, կուսակրօնի սքեմ» հազնողներ էին:

Սահմանափակ հասկացողութեան հետեւանք է հէնց այն, որ Էջմիածնում միայն միխրակոյտ են տեսնում, ու դրսում՝ բուրաստան. Սահմանափակութիւնը այն է, որ ստում են թէ այս մենք պակասութիւններ ունենք ու կուզենք միասին մեր ազգային պակասը լրացնել, թէ այն, որ չեն խոստովանում՝ իրենց պակասութիւնները եւ խոստովանողին էլ քարկոծում են. Պակասութիւնը կայ. աշխատաւոր է պէտք. մեզանում բացի այն որ քաջութիւն չեն ունենում՝ «ով ձեզնից արդար է, թող առաջին քարը նա ձգէ» իմաստուն խօսքն յիշելու, այլ եւ քաւականանում են միայն խրատներ տալով:

Շատ լսեցինք խրատ, գործ ցոյց տուէք, մեր ուզածը վերջինն է, առաջինը շատ լսեցինք ու սակայն գործ չտեսանք: Թողնենք անճնականը, հասարակականով զբաղուենք, զանք քննութեան, նայենք ու տեսնենք, ով գործին անընդունակ է հեռանայ. կարողաւորը տեղը բռնի:

Չասե՛նք թէ խրատ կարդալը Իւրեւի շուտ ան-սահման հայեացքների տէր մտաւորականութեան կենդրոնում՝ նրատաճներից ոմանք խրատներ տալու եւ գործով երջեմն բուրովին հակառակ են անում, երբ «Հորիզոն»-ի նոյն համարում՝ Էջմիածնի կաթողիկոսական դիւանի թղթերը բաղ-

նսում՝ վառելու գրոյցն են անում, երբ Ղարաբաղի եւ Երեւանի թեմական դպրոցների հոգաբարձական արխիւներից վերցրած վաւերագրերի կտորները Գիւտ ա. ք-ի մօտ են գտնում...։

Չասենք թէ «Уба бы корова не мычала, твоя бы молчала».

Իսկ եթէ էջմիածնի մի միաբան անէր այդ պատմական սխրագործութիւնը. ինչ կասէր «Հորիզոն»-ը, սակայն. ասողը քահանայ է, որ վեղար չունի, հետեւապէս վաւերագիր վերցնելու կտրտելու իրաւունք ունենալուց զատ, ուրիշին էլ դատապարտել կարելի է...

Ով արդեօք դեր փոխելու մասին պիտի խօսէ «Հորիզոն»-ի գրողը, որ հայ պատմաբանի արարքը յամենայն դէպս ուշադրութեան չառաւ.

Ո՞րտեղ է մոխրակոյտը փնտրեցէք լաւ. գուցէ այդ «մտաւորականութեան կենդրոնում» էլ գտնէք:

Գ. աք.

